ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԻՐԻ ՆՈՐԻԿԻ
ՄԿՐՏՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՓԱՍՏԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ հիմք ընդունելով Նաիրի Նորիկի Մկրտչյանի դիմումը, Վաղինակ Վոլոդյայի Մկրտչյանի, Դրաստամատ Խաչիկի Պողոսյանի, Թաթուլ Արշալույսի Նազարյանի հայտարարությունները, անձնագրերը, ամուսնության վկայականը, ծննդյան վկայականները՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրի բնակիչ Նաիրի Նորիկի Մկրտչյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ բաղկացած է եղել վեց անձից.

Նաիրի Նորիկի Մկրտչյան՝ ծնված 26.08.1982 թվականին,

Վահան Նիկոլի Մկրտչյան՝ ծնված 01.11.1929թվականին, մահացած 09.06.2016թ.,

Սերվենիկ Բաղդասարի Ղազարյան՝ ծնված 05.11.1932թվականին, մահացած 24.10.1999թ.,

Նորիկ Վանիկի Մկրտչյան՝ ծնված 02.01.1959 թվականին,

Ցողիկ Եղիշեի Մկրտչյան՝ ծնված 10.01.1959 թվականին,

Նելի Նորիկի Մկրտչյան՝ ծնված 20.12.1984 թվականին:

2.Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրի բնակիչ Նաիրի Նորիկի Մկրտչյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Գեղասար գյուղում ունեցել է բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է: